



# ՈՒՂԵՅՈՒՅՑ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ  
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ  
ԿԱՌՈՒՅՄԱՆ

Երևան 2024

Ուղեցույցի հիմնական նպատակն է՝ աջակցել Հայաստանի Հանրապետության համայնքներին օգտագործելու վերականգնվող էներգետիկայի ներուժը համայնքային արևային ֆոտովոլտային կայանների կառուցման միջոցով:

Սույն ուղեցույցը մշակվել է Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող «Համայնքի կայունության ամրապնդում էներգաարդյունավետության և ցածր արտանետումներով զարգացման միջոցով» ծրագրի շրջանակներում:

**Սույն ուղեցույցում արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ ներկայացնեն ՄԱԶԾ-ի տեսակետը:**

**Սույն ուղեցույցը հանդիսանում է ՄԱԶԾ-ի սեփականություն: Ուղեցույցում տեղ գտած տեղեկությունը կիրառելու, կրկնօրինակելու, երրորդ կողմին փոխանցելու և/կամ այլ նպատակով օգտագործելու դեպքում, պետք է կատարվի հղում աղբյուրին:**

© ՄԱԶԾ Հայաստան, 2024թ.

# Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ.....	5
1. Ներածություն.....	6
2. Ալավերդիի համայնքային առևտրային կայանի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները.....	7
3. Հողի ընտրություն և լիցենզավորում.....	8
3.1 Հողի ընտրություն.....	9
3.2 Հողի չափագրում.....	10
3.3 Կադաստրի պետական կոմիտեից հողի սեփականության վկայականի ձեռքբերում.....	11
3.4 Հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն.....	12
3.5 ՀՈԱԿ-ի ստեղծում, կանոնադրության հաստատում և հողամասի հատկացում.....	14
3.6 «ՀԷՑ» ՓԲԸ տեխպայմանի ստացում.....	17
3.7 Լիցենզավորում.....	19
4. Նախագծանախահաշվային և փորձաքննական աշխատանքներ.....	26
Հավելված 1.....	28
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ.....	28
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	28
1.1. Արտադրական հզորության կառուցման նպատակը և սպասվող տնտեսական, սոցիալական և առևտրային արդյունքը.....	28
1.2. Կառուցվող կամ վերականգնվող օբյեկտի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները.....	29
1.3. Տեղեկություններ շինմոնտաժային ծառայությունների շուկայի, հիմնական սարքավորումներ արտադրողների (առաքողների) և դրանց արժեքների մասին.....	30
2. ՇՈՒԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.....	31
2.1. Արտադրանքի (ծառայության) իրացման հնարավորությունները.....	31
3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ.....	31
3.1. Արտադրության (ծառայության) տեխնոլոգիայի և հիմնական տեխնոլոգիական սարքավորումների ընտրության տեխնիկական և տնտեսական հիմնավորումը.....	31
4. ՕԲՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ) ՏԱՐԱԾՔԸ.....	33
4.1. Օբյեկտի տեղաբաշխման հիմնավորումը.....	33
4.2. Քարտեզագրական և այլ նյութեր, այդ թվում՝ կառուցվող օբյեկտի տեղաբաշխման սխեման, որի վրա նշված են տրանսպորտային հաղորդակցության ուղիներին և ճարտարագիտական ցանցերին միացման կետերը, օբյեկտի հատակագիծը:.....	33

5.	ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ .....	34
5.1.	Օբյեկտի շինությունների և կառույցների հիմնական բնութագիրը .....	34
5.3.	Նախնական լուծումներ օբյեկտի էներգամատակարարման (սնման), ջրամատակարարման, կոյուղու և այլնի վերաբերյալ.....	35
6.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՕԲՅԵԿՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ .....	35
6.1.	Օբյեկտի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա.....	35
6.2.	Նախնական բնապահպանական լուծումներ.....	36
7.	ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ.....	36
7.1.	Կառուցման աշխատանքների արժեքը բացված տեսքով .....	36
7.2.	Ֆինանսավորման պայմանները .....	37
7.3.	Հիմնական արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը .....	37
7.4.	Գումարների հոսքերի բաշխվածություն.....	37
7.5.	Գործունեության հիմնական ցուցանիշները հնարավոր փոփոխությունը հաշվարկային ժամանակաշրջանում: .....	39
	<i>Հավելված 2</i> .....	40

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱՆ	Արդարադատության նախարարություն
«ԲԷՑ» ՓԲԸ	Բարձրավոլտ էլեկտրացանցեր ՓԲԸ
«ՀԷՑ» ՓԲԸ	Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Կարգ	ՀԾԿՀ 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ 374 -Ն որոշմամբ հաստատված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը
Սուբվենցիոն ծրագիր	Ալավերդի համայնքում 500 կՎտ դրվածքային հզորությամբ համայնքային առևտրային արևային կայանի կառուցման ծրագիր
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՇՄԶԳ	Շվեդական միջազգային զարգացման գործակալություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՖՎ	Ֆոտովոլտային
մլն.	միլիոն
կՎտ	կիլովատտ
Վտ	վատտ
հա	հեկտար

# 1. Ներածություն

Ուղեցույցի հիմնական նպատակն է՝ աջակցել ՀՀ համայնքներին օգտագործելու վերականգնվող էներգետիկայի ներուժը համայնքային արևային ֆոտովոլտային կայանների կառուցման միջոցով:

Ուղեցույցի կազմման համար հիմք է ընդունվել 2023-2024թթ. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Մղարթ բնակավայրում 500 կՎտ դրվածքային հզորությամբ համայնքային առևտրային արևային ՖՎ էլեկտրակայանի կառուցման ծրագիրը:

Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արևային ՖՎ կայանների կառուցումը և բնականոն շահագործումը կանոնակարգվում է «Էներգետիկայի մասին», «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» և այլ օրենքների, մինչև 2040 թվականը Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի, ՀԾԿ՝ որոշումների և ընթացակարգերի (ներառյալ լիցենզիայի ստացման գործընթացը) համաձայն՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված արևային առևտրային կայանների կառուցման և պարտադիր գնման երաշխիքով սահմանաչափերի (ընդհանուր 15 ՄՎտ դրվածքային հզորության) շրջանակներում:

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի գ-ը կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, ՀԾԿ՝ 2013 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, ՀԾԿ՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 520-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, սակագների սահմանման ու վերանայման կարգը, առ այն, որ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հատկացվում է արևային կայանների կառուցման և պարտադիր գնման երաշխիքով սահմանաչափեր (ընդհանուր 15 ՄՎտ)՝ կայանից ստացված էլեկտրաէներգիան նախատեսվում է վաճառել «ՀԷՑ» ՓԲԸ 20,961<sup>1</sup> ՀՀ դրամ/կՎտժ սակագնով առանց ԱԱՀ՝ համաձայն ՀԾԿ՝ 2023 թվականի մայիսի 31-ի թիվ 184-Ն որոշման:

---

<sup>1</sup> Սույն սակագինը ենթակա է փոփոխման տարեկան կտրվածքով: Սակագների արժեքներին ծանոթանալու համար հարկավոր է հետևել ԶԾԿԶ համապատասխան որոշումներին:

## **2. Ալավերդիի համայնքային առևտրային կայանի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները**

Համաձայն արևային ՖՎ կայանի արտադրողականության քարտեզի և վահանակների տեղադրման անկյան՝ նախատեսվող 500 կՎտ (հաստատուն լարմամբ ձևավորվող 600 կՎտ) հզորությամբ արևային կայանը առաջին տարվա ընթացքում միջինում կարտադրի մոտ 1,013,000 կՎտժ էլեկտրաէներգիա, որը ցանցի 97% հասանելիության պարագայում կհանգեցնի ցանց մղվող 984,000 կՎտժ էլեկտրաէներգիայի, ինչի դիմաց ՀՈԱԿ-ը «ՀԷՑ» ՓԲԸ-ից կստանա տարեկան շուրջ 20,625 միլիոն ՀՀ դրամ եկամուտ (առանց ԱԱՀ):


Օգտագործվել է բարձրորակ սարքեր և սարքավորումներ, որոնք երկարակյաց են ու պահանջում են նվազագույն շահագործման և պահպանման ծախսեր: Ներդրումների շուրջ 14%-ը իրականացվել է համայնքի միջոցներով, ֆինանսավորման 26%-ը իրականացվել է ՄԱԶԾ-ՇՄԶԳ ծրագրի կողմից, իսկ մնացած 60%-ը՝ ՀՀ կառավարության կողմից, սուբվենցիոն ծրագիր շրջանակներում:

Կայանի կազմակերպատիրավական գործընթացներն իրականացվում են այդ նպատակով Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ հիմնադրված համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ-ի) միջոցով:

Կայանի տարեկան շահագործման և պահպանման ծախսերը կկազմեն կայանի կառուցման կապիտալ ներդրման ծախսերի շուրջ 2,5% են (միջինում 20 տարվա ընթացքում): Կայանի աշխատանքի մինչև 10-րդ տարին պետք է նախատեսել փոխակերպիչների ամբողջական փոխարինում նորերով (շուրջ 5%): Շահագործման և պահպանման գործառույթների շրջանակներում նախատեսվում է իրականացնել արևային մոդուլների տարեկան 4 անգամ լվացում:

Կայանի շահագործումից ստացված ամբողջ շահույթը՝ համաձայն ՀՈԱԿ-ի կանոնադրության, ուղղվելու է Ալավերդի համայնքում Կայուն զարգացման նպատակների՝ մասնավորապես էներգախնայողության ու էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Կայանի ամսական արտադրության հաշվարկային արժեքները ներկայացված են ստորև պատկերված գրաֆիկում:



Նկար 1. Կայանի կողմից տարեկան արտադրությունը, կՎտժ՝ ըստ ամիսների

Նախնական գնահատմամբ՝ կայանի կառուցման համար նախատեսված է օգտագործել 625-Վտ հզորությամբ մոնոբյուրեղային երկկողմանի, 21,7% արդյունավետությամբ և բարձր որակի արևային ՖՎ մոդուլներ, որոնց տարեկան հզորության անկումը չի գերազանցի 0,5%-ը՝ նախնական հզորության համեմատ: Սույն մոդուլների ընտրությունը թույլ է տալիս նվազեցնել կրող կոնստրուկցիայի քանակը, նվազեցնել պահանջվող մակերեսը, նվազեցնել լարանցման քանակը, կրճատել շինարարական աշխատանքների ծավալը:

Նախատեսվող 960 հատ արևային մոդուլների արտադրած հաստատուն հոսանքը փոփոխականի վերաժվում է 5 հատ 100 կՎտ հզորությամբ սթրինգային/շարքային ինվերտորների օգնությամբ: Նմանօրինակ ինվերտորների ընտրությունը պայմանավորված է համակարգի հուսալիության բարձրացման և շահագործման/սպասարկման հեշտացման նպատակներով: Կրող ալյումինե կոնստրուկցիայի հիմնական պահանջն եվրոպական և ազգային ստանդարտների համապատասխանությունն է: Հողանցման աշխատանքները պետք է իրականացվեն հատուկ ներկրված պղնձյա, ալյումինե, ցինկապատ և չժանգոտվող մետաղի բաղադրիչ նյութերի օգնությամբ կամ պղնձե հաղորդալարերով: Էլեկտրական ցանցերի հետ ինտեգրումը և սարքավորումների ընտրությունը հարկավոր է իրականացնել տրամադրված ցանցի միացման հիմնական տեխնիկական պայմանին համապատասխան:

### 3. Հողի ընտրություն և լիցենզավորում

Սույն բաժնում ըստ հերթականության ներկայացված են համայնքային արևային ՖՎ կայանի հողատարածքի ընտրության, նպատակային նշանակության փոփոխության




և էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի ստացման քայլերը:

### 3.1 Հողի ընտրություն

Արևային ՖՎ կայանի կառուցման վայրը ընտրելիս հարկավոր է ուսումնասիրություններ և տեղազննումներ իրականացնել ընտրված վայրերում որոնք կհմապատասխանեն հստակ տեխնիկական չափորոշիչներին: Ցանկալի է ընտրված տեղանքը լինի համեմատաբար հարթ, արևմուտքից և արևելքից սովեր առաջացնող խոչընդոտներ չլինեն, հողամասի մոտակայքում առկա լինի 6 կՎ և ավել լարման օդային գիծ (կախված է կայանի հզորությունից) և տեղանքում հասանելի լինեն մոտեցման ճանապարհներ կամ ուղիներ:

Հարկ է ընդգծել որ հողատարածքի ընտրության փուլում հարկավոր է հնարավորինս խուսափել գյուղատնտեսական վարելահողերի ներառումը, քանի որ տվյալ կատեգորիայի տարածքները նախընտրելի չեն կայուն զարգացման և պարենային անվտանգության տեսակետից :

Ընտրված հողամասի արևային ներուժը գնահատելու համար հարկավոր է այն միավորվել արևային ատլասի հետ և մոդելավորվել հատուկ ծրագրային ապահովման միջոցով: Ծրագրային ապահովումը թույլ է տալիս գնահատել կառուցվող կայանի արտադրողականությունը:



Նկար 2. Հայաստանի արևային քարտեզ

Ստորև բերված է Ալավերդիի արևային կայանի տեղադիրքը Մղարթ բնակավայրում, որտեղ հողամասի ընտրության ընթացքում հաշվի են առնվել վերոնշյալ չափորոշիչները:



*Նկար 3. Ալավերդի կայանի հողատարածքի պատկերը Մղարթ բնակավայրում*

### 3.2 Հողի չափագրում

Հողամասի չափագրումն իրականացվում է համայնքապետարանի պատվերով՝ լիցենզավորված անձի (կամ կազմակերպության) կողմից: Չափագրման արդյունքներով առանձնացվում է արևային կայանի համար ընտրված հողատարածքը և պատրաստվում են փաստաթղթերի փաթեթը առանձնացված հողակտորի համար՝ նոր սեփականության վկայական գրանցելու նպատակով:

ԱԵՓՎԱՄԱՆՏԻՆ՝ Ալավերդու համայնքապետարան անուն ազգանուն		<b>ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ</b> Մարզ Լոռի համայնք Ալավերդի գյուղ Մղարք փողոց _____ թիվ _____ Մարզ, համայնք, հասցե Կոորդինատներ (ՊՆՃ)		« ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ » 25.1 <b>ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱԿԱՐ</b> <b>Ա.ԹԱՄԱՉՅԱՆ</b> 4.3. _____ 2023թ.		
Մակերես հա	0.96221	<b>Պողանալի</b>			<b>Մասշտաբ 1:1000</b>	
Ծածկագիր	06-078-0032-0001-ից	Երկրաչափական կոորդինատներ	Գծային չափերը (մ)	Որակավորում ունեցող անձ	ՍԱՍԿԵԼ ՈՒՌԵՆԻ ԵՐԱՋՅԱՆ	
Նպատակային նշանակություն	արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության	X	Y	Որակավորման վկայականի համարը	002 տրված 05/դեկտեմբերի/2011 թվական	
Գործառնական նշանակություն	գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ	1	8465074.6822	4540107.8580	5,1	Ատորագրություն
<i>Լրացրելու ցուցանիշներ</i>		2	8465073.0831	4540112.7343	16,1	Իրավաբանական անձի անվանումը
		3	8465088.9539	4540115.1737	9,0	ՀՎՀՀ
		4	8465097.8540	4540116.5417	36,5	Ատորագրություն
		5	8465084.2868	4540150.4152	8,8	ամսա
		6	8465076.1448	4540147.1541	13,7	ամսաթիվ
		7	8465063.4612	4540142.0740	73,8	չափազույգման
		8	8465040.4502	4540212.2415	38,0	ամսա
		9	8465072.3913	4540232.8270	79,0	հատուկացման
		10	8465150.9800	4540224.7766	43,2	կազմման
		11	8465145.8290	4540181.8896	69,8	
		12	8465137.5048	4540112.5829	63,0	

Նկար 4. Ալավերդի արևային կայանի համար հարկացված հողամասի հարակագիծը

### 3.3 Կադաստրի պետական կոմիտեից հողի սեփականության վկայականի ձեռքբերում

Առանձնացված հողատարածքի մասով դիմում է ներկայացվում Կադաստրի պետական կոմիտե, որպիսի ձեռք բերվի անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման նոր սեփականության վկայական:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 11 օգոստոսի 2023 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Ալավերդի գյուղ Մղարթ 9-րդ փողոց 2 հողամաս

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՍԱԹՂԹԵՐԸ

ՀՀ կառավարության որոշում թիվ 1028-Ն կայացրած 29/06/2005 թ-ին , Համայնքի ղեկավարի որոշում թիվ 878-Ա կայացրած 14/07/2023 թ-ին , Համայնքի ղեկավարի որոշում թիվ 969-Ա կայացրած 08/08/2023 թ-ին

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-078-0032-0006

Մակերեսի չափը (հա)՝ 0.96221

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## *Նկար 5. Ալավերդիի արևային կայանի կառուցման համար հողի նախկին սեփականության վկայական*

Հարկ է նշել, որ համաձայն գործող ՀՀ օրենսդրության առևտրային արևային ՖՎ կայանների կառուցման համար անհրաժեշտ պայման է, որ հողի նպատակային և գործառնական նշանակությունը լինի էներգետիկ նշանակության, իսկ եթե ընտրված հողատարածքը չի հանդիսանում որպես այդպիսին, հետևաբար անհրաժեշտություն է առաջանում մեկնարկել հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության գործընթացը:

### 3.4 Հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություն

Հողի նպատակային նշանակության փոփոխության գործընթացը նախաձեռնվում է հողի սեփականատիրոջ՝ տվյալ դեպքում համայնքապետարանի կողմից: Հողի նպատակային նշանակության փոփոխությունն իրականացվում է ՀՀ կառավարության

սահմանած կարգերով՝ գլխավոր հատակագիծ ունեցող բնակավայրերում ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով, իսկ հաստատված հատակագիծ չունեցող բնակավայրերի համար՝ ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Ալավերդիի արևային կայանի դեպքում Մղարթ բնակավայրը չունի հաստատված գլխավոր հատակագիծ, հետևաբար հողամասի նպատակային նշանակության փոփոխությունն իրականացվել է երկրորդ տարբերակով.

Ըստ սահմանված կարգի հողի նպատակային նշանակության փոփոխության գործընթացը մեկնարկում է համապատասխան փաթեթի պատրաստմամբ, որը ներառում է

*3.4.1 Գործարար ծրագիր (տես՝ հավելված 1)*

*3.4.2 Հատակագիծ (տես՝ նկար 4)*

*3.4.3 Հողի վկայական (տես՝ նկար 5)*

3.4.4 Համաձայնություն ենթակառուցվածքային կազմակերպություններից՝ «ՀԷՑ» ՓԲԸ, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ, «ԲԷՑ» ՓԲԸ, Զրոգտագործողների ընկերություն, «Վեոլիա ջուր» ՓԲԸ, «Տրանսգազ» ՍՊԸ

*3.4.5 Տեղեկանք և հիմնավորում*

Հողի նպատակային նշանակության փոփոխության փաթեթի պատրաստումից հետո համայնքապետարանը գրությամբ այն ներկայացում է մարզպետարան, որն էլ իր հերթին այն ներկայացնում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացության ստացման նպատակով:

Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրված դրական եզրակացության հիման վրա համայնքի ավագանին կայացնում է որոշում հողի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2023 թվականի N\_

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒՄ ԱՄՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՂԱՐԹ  
ԳՅՈՒՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ, 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԼՎՈՂ, ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ 06-078-0032-0006  
ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.96221 ՀԱ ՄԱՎԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր  
սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»  
թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով «Հողերի օգտագործման  
ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի»  
16.10.2023թ. N 102 դրական եզրակացությունը, սեփականության իրավունքի N 11082023-06-  
0060 վկայականը

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին  
որոշում է.

1. Ալավերդի համայնքի համայնքի Մղարթ գյուղի 9-րդ փողոց, 2 հասցեում գտնվող, 06-  
078-0032-0006 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական  
նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական  
նշանակության, 0.96221 հա մակերեսով հողամասը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի,  
կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության,  
էներգետիկայի հողեր գործառնական նշանակության:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարին՝  
ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառնականության իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
օրվանից:

Նկար 6. Ալավերդի համայնքի ավագանու որոշման նախագիծը՝ հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության մասին

### 3.5 ՀՈԱԿ-ի ստեղծում, կանոնադրության հաստատում և հողամասի հատկացում

Հաշվի առնելով, որ կայանի կազմակերպաիրավական գործընթացներն իրականացվելու են ՀՈԱԿ-ի միջոցով, զուգահեռաբար հողամասի նպատակային նշանակության փոփոխության գործընթացների, համայնքապետարանը նախաձեռնում է նոր ՀՈԱԿ-ի հիմնադրման և դրա կանոնադրության (տես՝ հավելված 3) մշակման և հաստատման աշխատանքները, համաձայն որի ՀՈԱԿ-ը լիցենզիայի հիման վրա պետք է իրականացնի արևային էներգիայի արտադրություն և վաճառք, որը համարվում է կազմակերպության հիմնական գործունեության տեսակը: Ստացված շահույթը համայնքապետարանի և ՀՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված կարգով օգտագործվելու է համայնքում՝ Կայուն զարգացման նպատակների, մասնավորապես՝

էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով:

Հարկ է նաև, որ համայնքն իրականացնի ընտրված հողամասի հողահատկացում և այն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրի ՀՈԱԿ-ին: Հողահատկացման գործընթացն իրականացվում է համայնքի ավագանու որոշմամբ:

ՀՈԱԿ-ի ստեղծման, հողահատկացման և պետական գրանցման աշխատանքները իրականացվում են ըստ նպատակահարմարության՝ առանձին ավագանու որոշումներով և տարբեր ժամանակահատվածներում կամ մեկ միասնական որոշմամբ:

ՆԱԽԱԳԻԾ

**ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**  
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
2023 թվականի N\_

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱԿՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 21-րդ և 28-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանին որոշում է.

1. Հիմնադրել «ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել «ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել «ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը՝ համաձայն հավելված 2-ի:
4. 0.96221 հա մակերեսով տարածքը (մարզ Լոռի, համայնք Ալավերդի, գյուղ Մդարթ, 9-րդ փողոց, 2 հողամաս, կադաստրային ծածկագիր՝ 06-078-0032-0006) անհատույց օգտագործման տրամադրել համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
5. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կազմակերպել անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման աշխատանքները:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

*Նկար 7. Ալավերդի համայնքի ավագանու որոշման նախագիծը՝ ՀՈԱԿ-ի ստեղծման, հողահատկացման և պետական գրանցման աշխատանքների իրականացման մասին*

Ավագանու որոշմամբ, ՀՈԱԿ-ի հիմնադրումից հետո համայնքի ղեկավարը նշանակում է ՀՈԱԿ-ի տնօրեն: Տնօրենն իրականացնում է ՀՀ արդարադատության

Նախարարության ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցման աշխատանքները: Գրանցման համար վճարվում է պետտուրք 10 000 ՀՀ դրամի չափով:

  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ**  
**ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2024-01-04**

**«ԱՆՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ»**  
**Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ)**

Գրանցման համար [redacted]

Հիմնադրման տարի **2024**

Գրանցման ամսաթիվ **2024-01-04**

Գործունեության ժամկետ **Անժամկետ**

Կարգավիճակ **Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:**

Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ) [redacted]

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) [redacted]

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովագրի ծածկագիր) [redacted]

Էլ. փոստ [redacted]

Կայք -

**Գտնվելու վայրը**

Հասցե **ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂ. / Ե / 8/1 ԱՆՎԵՐԴԻ 1702 ԱՆՎԵՐԴԻ ԼՈՌԻ ՀԱՅԱՍՏԱՆ**

Հեռախոս [redacted]


**Գործադիր մարմնի ղեկավար**

Պաշտոն **Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար**

Անուն Ազգանուն [redacted]

Անձնագրային տվյալներ [redacted]


Հասցե [redacted]



Նկար 8. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում «Անվերդի արևային կայան» ՀՈԱԿ-ի գրանցման քաղվածքը




Հողի նպատակային նշանակության փոփոխման և հողահատկացման գործընթացների ավարտից հետո անհրաժեշտ է փոխարինել և ստանալ հողի նոր սեփականության վկայական՝ նոր հիմնադրված ՀՈԱԿ-ի անունով:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՎԿԱՅԱԿԱՆ**

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի  
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 28 փետրվարի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

- 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**  
ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ ՀՈԱԿ
- 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**  
Մարզ Լոռի, համայնք Ալավերդի գյուղ Մղարթ 9-րդ փողոց 2 հողամաս
- 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ**  
Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր 23/02/2024թ. գրանցամատյան 596
- 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**  
Կադաստրային ծածկագիրը՝ 06-078-0032-0006  
Մակերեսի չափը (հա)՝ 0.96221  
Նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների  
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ էներգետիկայի  
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Նկար 9. Ալավերդի արևային կայանի հողի նոր վկայականը

### 3.6 «ՀԷՑ» ՓԲԸ տեխպայմանի ստացում

Կայանի նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի ստացման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի նախապատրաստման համար

անհրաժեշտ է «ՀԷՑ» ՓԲԸ-ից ստանալ Արևային կայանը բաշխիչ ցանցին միանալու տեղեկանք (տեխնիկական պայման):

Տեղեկանքը ստանալու համար ՀՈԱԿ-ի տնօրենը «ՀԷՑ» ՓԲԸ տնօրենի անունով ներկայացնում է համապատասխան դիմում՝ նշելով և կցելով անհրաժեշտ տեղեկատվությունն ու փաստաթղթերը՝ ներառյալ 250 000 ՀՀ դրամ վճարման անդորրագիրը:

**«ՀԷՑ» ՓԲԸ Տեխնիկական տնօրեն  
պարոն Դ. Գրիգորյանին**

Ծանուցման հասցե՝ \_\_\_\_\_  
Հեռ.՝ \_\_\_\_\_

**Հարգելի պարոն Գրիգորյան**

Համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N523-Ն որոշման Գլուխ 28-ով սահմանված ընթացակարգի՝ խնդրում եմ տրամադրել Բաշխման ցանցին միացման հնարավորության վերաբերյալ տեղեկանք:

Կից ներկայացնում եմ պահանջվող տեղեկատվությունը և փաստաթղթերը՝

▪ կայանի տեսակը	արևային ֆոտովոլտային
▪ անվանումը	Արևային էներջի խոտան 200 կ
▪ հզորությունը	500 կՎտ
▪ տեղակայման վայրի վերաբերյալ տեղեկություն	կցվում է
▪ վճարումը հավաստող փաստաթուղթ	կցվում է
▪ տնօրենի անձնագրի պատճենը	կցվում է
▪ պետ.ռեգիստրի վկայականի պատճենը	կցվում է

Դիմող՝ \_\_\_\_\_  
(ստորագրություն/կնիք)

Նկար 10. «Ալավերդի արևային կայան» ՀՈԱԿ-ի տնօրենի դիմումը «ՀԷՑ» ՓԲԸ-ին



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ

ELECTRIC NETWORKS OF ARMENIA

ЭЛЕКТРИЧЕСКИЕ СЕТИ АРМЕНИИ

ՀՀ Երևան, Ա. Արմենակյան փողոց 127

**№ S-10/0148**

**«08» 02 2024թ.**

## ՏԵՂԵԿԱԼՔ /ԱՐՏԱԴՐՈՂԻ ՄԻԱՅՈՒՄ/

**Տրվում է  
Պատճենը**

«Ալավերդի արևային կայան» ՀՈԱԿ-ին  
«Հաշվարկային Կենտրոն» ՓԲԸ գլխավոր  
տնօրեն Մ. Մեսրոպյանին  
«Դեբեդ» մասնաճյուղի  
Գլխ. ճարտարագետ Ի. Բաղդասարյանին  
«Ալավերդի արևային կայան»  
ՀՀ Լոռու մարզ, հ. Ալավերդի գ. Մղարթ,  
9-րդ փողոց 2 հողամաս  
500

**Արևային կայանի անվանումը  
Նախագծվող արևային կայանի  
հասցեն  
Կայանի հզորությունը (կՎտ)**

1. Արևային կայանի տարածքում կառուցել 630 կՎԱ հզորության 10/0,4 կՎ լարման ենթակայան:
2. Այժմ «Արևային կայան» միացնել «Ծաթեր» 35/10 կՎ ե/կ-ից սնվող «Մղարթ» 10 կՎ լարման օդային գծի մոտակա խարսխային հենարանին:
3. Արևային կայանը միացնել նոր կառուցվող 630 կՎԱ հզորության 10/0,4 կՎ լարման ենթակայանին:
4. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովից ստացված համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում անհրաժեշտ է գրավոր «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը ներկայացնել հայտ՝ կցելով ԷԲՑ կանոնների N 2 հավելվածում նշված տեղեկությունը, ինչպես նաև սույն կանոնների 198 կետով պահանջվող մյուս տեղեկատվությունները և փաստաթղթերը:

▪ Տեղեկություն ուժի մեջ է 6 (վեց) ամիս

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ**

**Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Նկար 11. Ալավերդի արևային կայանի համար «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված բաշխիչ ցանցին միացման տեխնիկական պայմանը

### 3.7 Լիցենզավորում

ՀՀ-ում համայնքային առևտրային ՖՎ կայաններում էլեկտրաէներգիայի արտադրության գուրծունեությունը գործող օրենսդրության համաձայն հանդիսանում է լիցենզավորվող գործունեություն: Էներգետիկայի բնագավառում լիցենզիաների

տրամադրման իրավասու մարմին է հանդիսանում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը: Առևտրային էլեկտրակայանների կառուցման և արտադրության լիցենզիան տրամադրվում է ՀԾԿ որոշմամբ:

Լիցենզիայի ստացման համար ՀՈԱԿ-ի տնօրենը ՀԾԿ 2013թ. նոյեմբերի 1-ի թիվ 374-Ն որոշմամբ ընդունված կարգի համապատասխան ՀԾԿ է ներկայացնում լիցենզիա ստանալու հայտը և պահանջվող փաստաթղթերի փաթեթը:

ՀՈԱԿ-ի տնօրենը, օրենքով սահմանված կարգով, պատասխանատվություն է կրում ՀԾԿ ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար: Հայտը և նրանում ընդգրկված փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և Կարգով սահմանված պահանջներին: Հայտը ՀԾԿ մուտքագրվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ՀԾԿ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումները ստուգում են հայտի ամբողջականությունը, նրանում ընդգրկված փաստաթղթերի ձևակերպման ճշտությունը և համապատասխանությունը Կարգի պահանջներին: Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են կամ առկա են հայտի մերժման հիմքեր:

ՀԾԿ-ն հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի մասին իրազեկում է ՀՈԱԿ-ին՝ հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի դեպքում հայտը պահպանվում է ՀԾԿ-ում: ՀՈԱԿ-ը, ՀԾԿ կողմից հայտի ուսումնասիրության բացասական արդյունքի պատճառները վերացնելուց հետո, կարող է կրկին դիմել ՀԾԿ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

ՀԱՅՏ  
ԼԻՑԵՆԶԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ



1. Ինդրում են տրամադրել 500 ԿԿտ հզորությամբ «Ալավերդի արևային կայան» ՀՈԱԿ արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա:
2. Լիցենզավորման ենթակա գործունեության վայրը (աշխարհագրական տարածքը)

**Հայաստանի Հանրապետության**

**Լոռու մարզ, Ալավերդի համայնք**, գ. Մղարք, 9 թղ փողոց, 2 հողամաս

3. Հայտատու իրավաբանական (ֆիզիկական) անձի անվանումը, (անունը, ազգանունը), կազմակերպական-իրավական ձևը

«Ալավերդի արևային կայան» ՀՈԱԿ

4. Գտնվելու (բնակության) վայրը ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ փ. 8/12.

5. Հնախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն

6. Պետական գրանցման (հաշվառման) համարը, հարկ վճարողի հաշվառման համարը

Պետական գրանցման համար՝

7. Լիցենզիայի գործողության հայցվող ժամկետը՝ 22 (քսաներկու) տարի, որից կառուցման ժամանակահատվածը՝ 2 (երկու) տարի, արտադրության ժամանակահատվածը՝ 20 (քսան) տարի

8. Հայտին կցվում են՝

1) գործարար ծրագիր,

2) հողամասի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերը

3) հողամասի հատակագծերը

4) հայտարարություն <http://www.azdarar.am/> կայքում

5) Կոնվերս բանկ ՓԲԸ -ի կողմից տված երաշխիքը կներկայացվի լրացուցիչ

6) տեղեկանք «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից՝ բաշխման

ցանցին միացման վերաբերյալ:

9. Սույն հայտով ներկայացված տեղեկությունների և փաստաթղթերի իսկությունը հաստատում են:

10. Սույնով տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ լիցենզավորման ողջ գործընթացին անչվող իրազեկումն իրականացվի սույն հայտով ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեով:

«Ալավերդի արևային կայան» ՀՈԱԿ-ի տնօրեն

## Նկար 12. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու ՀԾԿՀ-ի դիմելու հայտ

Փաստաթղթերի փաթեթը ներառում է հետևյալը՝

3.7.1 Մշակված գործարար ծրագիր (տես՝ հավելված 1)

3.7.2 ՀՈԱԿ-ի պետական ռեգիստրի վկայական (տես՝ նկար 8)

3.7.3 Հողի սեփականության վկայական (տես՝ նկար 9)

3.7.4 Հողի հատակագիծ (տես՝ նկար 4)

3.7.5 Տեղեկանք «ՀԷՑ» ՓԲԸ-ից (տեխսպայման) (տես՝ նկար 11)

3.7.6 Լիցենզիայի ապահովման բանկային երաշխիք (յուրաքանչյուր կԿտ-ի համար 2500 դրամ)

3.7.7 Ազդարար թերթում հայտարարության տեքստի պատճեն (screenshot)


Հավելված N 5  
Էներգետիկայի բնագավառում  
գործունեության լիցենզավորման կարգի

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Ալավերդի արևային կայան» ՀՈԱԿ-ը մտադիր է դիմել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կառավարող հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Ալավերդի համայնքի, գ. Մղարթ, 9-րդ փողոց, 2 հողամասի «Ալավերդի արևային կայան» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի հզորության արտադրության ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, Զորամար Անդրանիկ փ.8/12.,  
հեռ.՝ [redacted],  
էլ.փոստ. [redacted]

Նկար 13. Ազդարար թերթում հանրային իրազեկման օրինակ



Նկար 14. Azdarar.am կայքում հրապարակված հայտարարությունը

7.8. Լիցենզիայի ստացման պետական տուրքի վճարման անդորրագիր (100 հազար դրամ)

Բյուջետային փոխանցում N 000004

Ամսաթիվ	26/03/2024	Նույնացուցիչ	[Redacted]
Հաշիվ	[Redacted]	Գումար	
Շահառուի հաշիվ	[Redacted]	AMD	100,000.00
Վճարողի անվանում	ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱԸ ՀՈԱԿ		
Վճարողի բանկ	[Redacted]		
ՀՎՀՀ	[Redacted]		
Տարածաշրջանի/ԴՏ կոդ	[Redacted]		
Շահառուի անվանում	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով		
Ինքնագրադ անձ	Ոչ		
Գումարը բառերով	Մեկ հարյուր հազար դրամ		
Նպատակ	Ալավերդի արևային կայան ՀՈԱԿի համար էլ. Էներգիայի արտադրության լիցենզիայի ստացում(կառուցման ժամանակահատված)		
Ստորագրող	[Redacted]		
Ստորագրության կարգ	[Redacted]		
Ամսաթիվ	26/03/2024 11:59:01.280		
Սարքի անվանում	[Redacted]		
Սարքի սերիալ N	[Redacted]		
Ստորագրություն	[Redacted]		

Կատարված է

Նկար 15. Պետական փութքի վճարման անդորրագիր

Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում ՀԾԿՀ-ն սկսում է այն քննարկելու գործընթացը և կայացնում համապատասխան որոշում՝ սկսած ՀՈԱԿ-ի կողմից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ՀԾԿՀ ներկայացնելու պահից 25 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀԾԿՀ-ն հայտը մերժում է, եթե առկա են մերժման համար հիմք հանդիսացող պայմաններից մեկը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

3 ապրիլի 2024 թվականի №98-Ա

«ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ «ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» ԱՐԵՎԱՅԻՆ  
ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀՁՈՐՈՒԹՅԱՆ)  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2024 թվականի մարտի 11-ի հայտը և մարտի 19-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. «ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրել «Ալավերդի արևային կայան» արևային էլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի վարչական տարածքում (գյուղ Մղարթ) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2046 թվականի ապրիլի 4-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2026 թվականի ապրիլի 4-ը:

Նկար 16. ՀՈԱԿ-ին էլեկտրական էներգիայի (հզորության) լիցենզիա տրամադրելու  
ՀԾԿ որոշումը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ



Էլեկտրական էներգիայի (իզոլյուցիայի) արտադրության .

**Լ Ի Ց Ե Ն Ձ Ի Ա**

**ԼԷ № 0774** (11 էջից)

Տրվում է «ԱԼԱՎԵՐԴԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ»  
համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝  
մինչև 2046 թվականի ապրիլի 4-ը գործողության  
ժամկետով,

Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2024 թվականի ապրիլի 3-ի №98-Ա որոշմամբ

Հայաստանի Հանրապետության  
հանրային ծառայությունները կարգավորող  
հանձնաժողովի նախագահ՝

Գ. Բաղդամյան



« 3 » ապրիլի 2024 թ.

ԵՐԵՎԱՆ - 2024թ.

Նկար 17. ՀԾԿՀ 2024թ. ապրիլի 3-ի թիվ 98-Ա որոշմամբ հատկացված լիցենզիան

#### **4. Նախագծանախահաշվային և փորձաքննական աշխատանքներ**

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պատվիրվում են համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի (տես՝ նկար 18) և «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի (տեխպայման) (տես՝ նկար 9) հիման վրա: Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմվում են լիցենզավորված նախագծային կազմակերպության կողմից:

Օրենսդրական պահանջներին համապատասխան հարկ է իրականացնել կայանի կառուցման տարածքի ինժեներատեխնիկական պայմանների ուսումնասիրություն: Ուսումնասիրության նպատակն է կայանի նախագծման համար անհրաժեշտ ընդհանուր ինժեներատեխնիկական պայմանների գնահատումը, գրունտների կարգի որոշումը, սառեցման խորությունը և սեյսմիկ բնութագրերի գնահատումը: Իրականացված փորվածքների և հորատանցքերի ու առկա մերկացումների, ֆոնդային նյութերի և տեղազննության հիման վրա որակավորված մասնագետների կողմից տրվում է համապատասխան եզրակացություն:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը սահմանված կարգով ներկայացվում են համապատասխան (պարզ կամ համալիր) փորձաքննության: Փորձաքննության արդյունքներով համապատասխան լիցենզիա ունեցող ընկերությունն երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջին և տալիս դրական եզրակացություն:

**Այսպիսով սույն ուղեցույցում ներկայացված գործընթացներն ու փաստաթղթավորումն ավարտելուց հետո համայնքը կարող է մեկնարկել կայանի կառուցման շինարարական ծառայությունների ձեռքբերման գործընթացը:**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 5 09 փետրվար 2024թ.

Օբյեկտ **արևային կայանի կառուցում, արևային կայան, միացնել 630 կՎԱ հզորության 10/04 կՎ լարման ենթակայանին, ենթակայանը միացնել "Ծաթեր" 35/10 կՎ ե/կ-ից սեվող "Մղաթթ 10կՎՏ լարման օդային գծի մուտակա խարսխային հենարանին", 3-րդ կարգ**

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն, հակիրճ բնորոշումը, հզորությունը, դիսկայնության աստիճանը (կապեղղիան))

**1 փուլ**

Նախագծային փաստաթղթերի մշակման համար

(Նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը

**ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1**

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ , ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, (0253) 2-41-00 06967886**

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, քննության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը

**հայրը**

(կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

**12**

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

**ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ  
(աստղանիշով (\*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)**

1. Հողամասը գտնվում է

**էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների**

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. (\*) Հողամասի չափերը

**0.96221**

(հողամասի սահմանները՝ կողորդինապային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը

**ազատ տարածք**

(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ թվում՝ ջանքման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

Նկար 18. Ալավերդի համայնքապետարանի կողմից թողարկված «Ճարտարապետահատակագծային առաջադրանք»-ի օրինակ


# ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՋՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

## «————— ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ» ————— ԿՎտ ՀՋՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՎ ԿԱՅԱՆ

### 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

#### 1.1. Արտադրական հզորության կառուցման նպատակը և սպասվող տնտեսական, սոցիալական և առևտրային արդյունքը

«—————» ՀՈԱԿ -ը նախատեսում է ————— մարզի ————— համայնքում կառուցել ————— ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայան: Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի գ-ը կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի թիվ 374-Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 520-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, սակագների սահմանման ու վերանայման կարգը, առ այն, որ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հատկացվում է արևային կայանների կառուցման և պարտադիր գնման երաշխիքով սահմանաչափեր (ընդհանուր 15 ՄՎտ)՝ կայանից ստացված էլեկտրաէներգիան նախատեսվում է վաճառել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին («ՎԷՑ» ՓԲԸ) 20,961 ՀՀ դրամ սակագնով առանց ԱԱՀ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 31-ի թիվ 184-Ն որոշման:



«————— արևային կայան»-ը կառուցվում է համայնքի և ————— հատկացված ֆինանսական միջոցների հաշվին, պետական սուբվենցիոն ծրագրի շրջանակում:

Հարկ է նշել, որ տեղանքը բարենպաստ է նշված հզորությամբ կայանի կառուցման համար, քանի որ այն համեմատաբար հարթ է, արևմուտքից և արևելքից չկան ստվեր առաջացնող խոչընդոտներ: Արևային կայանը նախատեսվում է միացնել — կՎ ՕԳ-ին՝ կառուցելով մոտ —մ երկարությամբ — կՎ լարման օդային գիծ՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրված ցանցի միացման տեղեկանքին համապատասխան (տեղեկանքի համարը):

Վերևում բերված է վերականգնվող էներգիայի ընդլայնման ծրագրի շրջանակներում Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (R2E2) աջակցությամբ միջազգային խորհրդատվական ընկերությունների կողմից պատրաստված արևային էներգիայի ներուժի քարտեզը, որը ցույց է տալիս, թե որքան կՎտժ էլեկտրաէներգիա կարտադրվի 1կՎտ դրվածքային հզորությամբ արևային ՖՎ կայանը Հայաստանի տարբեր վայրերում: Քարտեզը հիմնված է ՀՀ ՇՄՆ «Հիդրոէներգետիկաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կատարված 20 տարվա վիճակագրական տվյալների, ինչպես նաև Համաշխարային բանկի աջակցությամբ, երկու տարվա ընթացքում կատարված ճշգրիտ չափումների և արբանյակային տվյալների հետազոտության հիման վրա:

Կայանի կառուցման և շահագործման ընթացքում նախատեսվում է ստեղծել \_\_ կարճաժամկետ և \_\_ երկարաժամկետ աշխատատեղեր:

## 1.2. Կառուցվող կամ վերականգնվող օբյեկտի ընդհանուր բնութագիրը և տեխնիկատնտեսական ամփոփ ցուցանիշները:

Համաձայն արևային ՖՎ կայանի արտադրողականության քարտեզի և վահանակների տեղակայման անկյան՝ նախատեսվող — կՎտ հզորությամբ արևային կայանը առաջին տարվա մեջ միջինում կարտադրի մոտ — կՎտժ էլեկտրաէներգիա, որը ցանցի —% հասանելիության պարագայում կհանգեցնի ցանց մղվող — կՎտժ էլեկտրաէներգիայի, ինչի դիմաց «———— արևային կայան» ՀՈԱԿ-ը «ՀԷՑ» ՓԲԸ-ից կստանա տարեկան շուրջ — միլիոն ՀՀ դրամ (առանց ԱԱՀ):

Նախատեսվում է տեղադրել բարձր արդյունավետությամբ — կՎտ հզորությամբ երկկողմանի մոնոբյուրեղային ՖՎ մոդուլներ, որոնց տարեկան հզորության նվազեցումը չի գերազանցում —%-ը:

Կայանի կառուցման, փորձարկման և գործարկման համար անհրաժեշտ ընդհանուր ներդրումների ծավալը կկազմի շուրջ — մլն. ՀՀ դրամ (— ԱԱՀ): Կառուցման ընթացքում նախատեսվում է օգտագործել բարձրորակ սարքեր և սարքավորումներ, որոնք երկարակյաց են և պահանջում են նվազագույն շահագործման

և պահպանման ծախսեր: Ներդրումների շուրջ —%—ը, որը կազմում է մոտ — մլն. ՀՀ դրամ, նախատեսվում է իրականացնել համայնքի միջոցներով, իսկ մնացած —%—ը, որը կազմում է շուրջ — մլն. ՀՀ դրամ՝ ՀՀ կառավարության կողմից, սուբվենցիոն ծրագիր շրջանակներում:

Կայանի տարեկան շահագործման և պահպանման ծախսերը կազմում են շուրջ — մլն. ՀՀ դրամ (միջին 20 տարվա ընթացքում): Կայանի աշխատանքի մինչև 10-րդ տարին նախատեսվում է փոխակերպիչների ամբողջական փոխարինում նորերով: Շահագործման և պահպանման գործառույթների շրջանակներում նախատեսվում է իրականացնել արևային մոդուլների տարեկան 4 անգամ լվացում:

Նշված ներդրման, ծախսերի և ֆինանսավորման պայմանների համար ծրագրից ստացված բոլոր շահույթները՝ համաձայն «———— արևային կայան» ՀՈԱԿ-ի կանոնադրության, կուղղվեն ————— համայնքում Կայուն զարգացման նպատակների՝ մասնավորապես էներգախնայողության ու էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

### 1.3. Տեղեկություններ շինմոնտաժային ծառայությունների շուկայի, հիմնական սարքավորումներ արտադրողների (առաքողների) և դրանց արժեքների մասին:

Կայանի աշխատանքային նախագծի մշակման և հիմնական շինմոնտաժային աշխատանքների ձեռքբերման համար իրականացվելու է մրցույթ: Նախնական գնահատմամբ կայանի համար նախատեսված ամենակարևոր բաղադրիչը՝ արևային վահանակների տեխնիկական պայմանները, ընտրվել են եվրոպական ստանդարտներին համապատասխանող ընկերությունների արտադրանքների ուսումնասիրության արդյունքում: Հարկ է նշել, որ արևային ՖՎ մոդուլները և նախատեսվող բոլոր սարքավորումները պետք է ունենան որակի բավարարման հավաստագրեր, համապատասխանեն տեղական բոլոր ստանդարտներին և տեխնիկական կանոնակարգերով սահմանված չափանիշներին: Նախատեսվում է ձեռք բերել — հատ արևային ՖՎ վահանակ՝ ընդհանուր շուրջ — մլն. ՀՀ դրամ արժողությամբ: Նախագծում օգտագործվելու են ————— ընկերության \_\_\_ կՎտ հզորությամբ ————— սերիայի շարքային ինվերտորներ: Արևային վահանակների կրող ալյումինե կոնստրուկցիան կարժենա շուրջ ————— մլն. ՀՀ դրամ: Վերջինիս ցուցանիշները հաշվարկված կլինեն տեղանքի կլիմայական պայմաններին բավարարելու համար:

Կայանի իրականացման համար նախատեսվող հիմնական սարքավորումների ցանկը, դրանց մատակարարների անվանումները, ծագման երկրները, արժեքները և այլ մանրամասները բերված են 7.1 կետում ներկայացված աղյուսակում:

## 2. ՇՈՒԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### 2.1. Արտադրանքի (ծառայության) իրացման հնարավորությունները

Նախատեսվող — ՄՎտ դրվածքային հզորությամբ կայանից ստացված էլեկտրաէներգիան նախատեսվում է վաճառել «ՀԷՑ» ՓԲԸ-ին՝ — ՀՀ դրամ սակագնով (առանց ԱԱՀ) համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 31-ի թիվ 184-Ն որոշման:

Կայանի նախատեսվող ամսական արտադրության հաշվարկային արժեքները ներկայացված են ստորև պատկերված աղյուսակում և գրաֆիկում՝

Ամսական արտադրություն կՎտժ

Ամիսներ	կՎտժ
Հունվար	
Փետրվար	
Մարտ	
Ապրիլ	
Մայիս	
Հունիս	
Հուլիս	
Օգոստոս	
Սեպտեմբեր	
Հոկտեմբեր	
Նոյեմբեր	
Դեկտեմբեր	
<b>Ընդհանուր</b>	

## 3. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

### 3.1. Արտադրության (ծառայության) տեխնոլոգիայի և հիմնական տեխնոլոգիական սարքավորումների ընտրության տեխնիկական և տնտեսական հիմնավորումը

Նախնական գնահատմամբ՝ կայանի կառուցման համար նախատեսվում է օգտագործել \_\_\_ Վտ հզորությամբ, \_\_\_% արդյունավետությամբ և բարձր որակի արևային ՖՎ մոդուլներ, որոնց տարեկան հզորության նվազեցումը չի գերազանցի \_\_\_%-ը՝ նախնական հզորության համեմատ: Սույն մոդուլների ընտրությունը թույլ է

տալիս նվազեցնել կրող կոնստրուկցիայի քանակը, փոքրացնել տեղադրվող մակերեսը, նվազեցնել լարանցման քանակը, կրճատել շինարարական աշխատանքների ծավալը: Հարկ է նշել նաև, որ մոդուլների հզորության թույլատրելի շեղումը պետք է կազմի \_\_ Վտ-ը, այսինքն՝ արտադրողը պետք է երաշխավորի ելքային առնվազն \_\_\_\_ Վտ հզորությունը:

Արևային մոդուլների արտադրած հաստատուն հոսանքը փոփոխականի պետք է վերաձվի \_\_ հատ \_\_\_\_ կՎտ հզորությամբ սթրինգային/շարքային ինվերտորների օգնությամբ: Նմանօրինակ ինվերտորների ընտրությունը պայմանավորված է համակարգի հուսալիության բարձրացման և շահագործման/սպասարկման հեշտացման նպատակներով: Կրող այլումինե կոնստրուկցիայի հիմնական պահանջն եվրոպական և տեղական ստանդարտների համապատասխանությունն է: Հողանցման աշխատանքները կիրականցվեն հատուկ ներկրված պղնձյա, այլումինե, ցինկապատ և չժանգոտվող մետաղի բաղադրիչ նյութերի օգնությամբ կամ պղնձե հաղորդալարերով: Էլեկտրական ցանցերի հետ ինտեգրումը և սարքավորումների ընտրությունը կիրականացվի տրամադրված ցանցի միացման հիմնական տեխնիկական պայմանին համապատասխան:

Պահպանման և շահագործման ծախսերի բացվածք (<< դրամ)			
	1 տարի	10 տարի	20 տարի
Կառավարման աշխատակազմ և աշխատուժ			
Վարչական եւ ընդհանուր ծախսեր			
Ապահովագրություն			
Օպերատորի վարձավճարը			
Կայանի կառավարում			
O & M աշխատանքի			
Սարքավորումների վարձույթ			
Հիմնական նորոգումներ			
Կայանի սպասարկում			
Պահեստամասեր			
Ջուր և սեփական կարիքների հոսանք			
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ</b>			



## 4. ՕՐՅԵԿՏԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ) ՏԱՐԱԾՔԸ

### 4.1. Օբյեկտի տեղաբաշխման հիմնավորումը

Արևային ՖՎ կայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքի \_\_\_\_\_ բնակավայրի հողամասերից մեկում: Հարկ է նշել, որ տեղանքը համեմատաբար հարթ է, արևմուտքից և արևելքից չկան սովեր առաջացնող խոչընդոտներ:

4.2. Քարտեզագրական և այլ նյութեր, այդ թվում՝ կառուցվող օբյեկտի տեղաբաշխման սխեման, որի վրա նշված են տրանսպորտային հաղորդակցության ուղիներին և ճարտարագիտական ցանցերին միացման կետերը, օբյեկտի հատակագիծը:

Տեղանքի աշխարհագրական կոորդինատներն են՝

Շրջադարձային բեկման կետեր	X	Y
1		
2		
3		
4		
5		
6		
7		
8		
9		
10		
11		
12		

Արևային կայանը զբաղեցնելու է մոտ 1 հա մակերես: Հողատարածքի կատեգորիան այժմ ունի էներգետիկ նշանակություն:

Հողատարածքի պատկերը և ՖՎ մոդուլների տեղաբաշխման սխեմաները պատկերված են ստորև.

## 5. ՀԻՄՆԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

### 5.1. Օբյեկտի շինությունների և կառույցների հիմնական բնութագիրը

Այլումինե կրող կոնստրուկցիաների վրա տեղադրվելու են արևային ՖՎ մոդուլները: Տեղադրվող մոդուլների երկրաչափական չափսերը և տեխնիկական այլ բնութագրերը բերված են կից հավելվածում:

Նախատեսվում է օգտագործել \_\_\_ տարբեր երկարություններով/տեսակների կրող կոնստրուկցիաներ՝ \_\_, \_\_ և \_\_ շարքային երկարությամբ սեղաններ: Տվյալ նախագծի համար օգտագործվելու են թվով \_\_\_ շարք \_\_\_ վահանակներով զինված, \_\_ շարք \_\_\_ վահանակներով և \_\_\_ շարք \_\_\_ վահանակներով զինված համակարգեր: Շարքերի միջև հեռավորությունը (pitch. n-րդ շարքի հիմնական հենակի և n+1-րդ շարքի հիմնական հենակի միջև հեռավորությունը) պետք է լինի \_\_\_ մ:

Կրող կոնստրուկցիաների տեղադրումը սկսելուց առաջ պետք է կատարվեն հողային/հարթեցման աշխատանքներ:

Կայանին հարակից տարածքում կկառուցվի \_\_ կՎ/ \_\_ կՎ \_\_ կՎԱ ենթակայան: Վերջինս վերափոխելու է կայանից ստացվող \_\_\_ Վ լարումը մինչև \_\_ կՎ: Ենթակայանը նախատեսվում է միացնել \_\_\_ 10 կՎ ՕԳ «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկանքին համապատասխան (տեխ պայմանի համարը):

Հաստատուն հոսանքը փոփոխականի փոխակերպելու և հաղորդելու համար պետք է կիրառվեն սթրինգ ինվերտորներ: Պաշտպանական բոլոր էլեկտրական սարքավորումների ձեռքբերման պահանջ է սահմանվելու տեղական և եվրոպական ստանդարտներին համապատասխանությունը:

### 5.2. Կառուցման կամ վերականգնման ժամանակացույցը ըստ փուլերի

	1				2				3				4				5				6			
Մեկնարկ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24
Տեխ. պայմանի ստացում																								
Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում Փորձաքննություն																								
Պատվեր և առաքում																								
Հողային աշխատանքներ																								

Կրող կոնստրուկցիաների տեղադրում										
Արևային մոդուլների և ինվերտորների տեղադրում										
Հողանցման և լարանցման աշխատանքներ										
Ենթակայանի կառուցում										
Փորձարկում և գործարկում										

### 5.3. Նախնական լուծումներ օբյեկտի էներգամատակարարման (սնման), ջրամատակարարման, կոյուղու և այլնի վերաբերյալ

Օբյեկտի էներգամատակարարումը կիրականացվի տեղադրված տրանսֆորմատորից և որպես պահուստային միջոց կնախատեսվի նաև դիզել գեներատոր:

### 5.4. Կայանի անվտանգության գոտիների և բնականոն գործունեության ապահովում:

Կայանի կառուցման և շահագործման համար նախագծային փաստաթղթերով նախատեսված հողատարածքը (տարածք) կառուցապատումից հետո, մինչև շահագործման հանձնելը, պետք է ցանկապատվի առնվազն 2 մետր բարձրությամբ: Նշել տարածքի տեսահսկման և լուսավորության համակարգերի առկայության վերաբերյալ:

## 6. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՕԲՅԵԿՏԻ ԱՂԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### 6.1. Օբյեկտի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա

ՖՎ կայանի ազդեցությունը բնության վրա հասցված է նվազագույնի, քանի որ ընտրված տարածքը տեղակայված է անջրդի, ժայռապատ, բուսականությունից զուրկ տարածքում, որտեղ հնարավոր չի այգեգործություն ծավալել: Բնապահպանական առումով սույն ծրագիրը ունի զգալի օգուտներ: Մասնավորապես կայանի տեղադրման արդյունքում ածխածնի երկօքսիդի արտանետումները տարեկան կտրվածքով կնվազեն

միջինը մոտ ——— տոննայով: Տարածքում չկան էնդեմիկ տեսակի կամ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ:

Սոցիալական տեսանկյունից ծրագիրը ևս ունի զգալի օգուտներ: Ծրագրի արդյունքում մասնավորապես կստեղծվեն մոտ ——— կարճաժամկետ և ——— երկարաժամկետ աշխատատեղեր:

Հմայանքային կայանի դեպքում նաև նշել տեքստում արված տնտեսական օգուտները:

## 6.2. Նախնական բնապահպանական լուծումներ

Ծրագրի իրականացումից առաջ նախատեսվում է մշակել շինարարության բնապահպանական կառավարման պլան, որի համաձայն կնվազեցվեն շինարարության ընթացքում առաջացած թափոնները:

Հարկ է նաև նշել, որ էլեկտրակայանը տեղադրվելու է մեկուսացված տարածքում հեռու՝ բնակավայրերից:

Շինարարության ավարտից հետո կկատարվեն մաքրման աշխատանքներ: Տարածքը հետագայում կօգտագործվի նաև էկոտուրիզմի զարգացման նպատակներով:

## 7. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

### 7.1. Կառուցման աշխատանքների արժեքը բացված տեսքով

Կառուցման համար անհրաժեշտ աշխատանքների և նյութերի արժեքը՝ ստորև աղյուսակում.

Սարքավորման անվանումը	Քանակը	Միավոր	Բնութագիր	Ընդհանուր արժեք առանց ԱԱՀ (<< դրամ)	Արտադրողի անվ.	Արտադրողի վայրը
Արևային ՖՎ մոդուլ		հատ				
Ինվերտոր (փոխակերպիչ)		հատ				
Կրող կոնստրուկցիա և հողանցում		Վտ				
Մալուխներ և ճկախողովակներ		լրակազմ				
Ցածր լարման բաշխիչ վահանակներ		լրակազմ				

Ենթակայան Միջին լարման ինտեգրման սարքավորումներ		լրակազմ				
Անվտանգության համակարգեր		լրակազմ				
Նախագծային, շինմոնտաժային, փորձարկման և գործարկման աշխատանքներ		լրակազմ				
Ծրագրի ղեկավարում, հողի ծեռքբերում		լրակազմ				
Ընդամենը						

## 7.2. Ֆինանսավորման պայմանները

Ֆինանսավորման համար ընտրվել է Պետություն-Համայնք-Միջազգային դոնոր կազմակերպությունների ներդրումների օպտիմալ հարաբերակցություն, հաշվի առնելով պետական սուբվենցիոն ծրագրով սահմանված դրույթները:

## 7.3. Հիմնական արտադրանքի ինքնարժեքի հաշվարկը

20 տարիների ընթացքում կայանը կարտադրի մոտ ——— կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով՝ արտադրված 1 կՎտժ-ի ինքնարժեքը կկազմի մոտ ——— ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

Հաշվի առնելով 20 տարվա ընթացքում կայանի արտադրության ծավալները, վահանակաների դեգրադացման աստիճանը, շահագործման և պահպանման ծախսերը, ինչպես նաև ՀԾԿՀ-ի կողմից սահմանված սակագնային քականությունը՝ ծրագրի հետգնման ժամանակահատվածը կազմում է ——— տարի:

## 7.4. Գումարների հոսքերի բաշխվածություն

Հաշվի առնելով արևային կայանի կառուցման համար նախատեսված ֆինանսավորման պայմանները և սպասարկման ծախսերը, ինչպես նաև տեղակայված սարքավորումների մաշվածության արագությունը, ստորև ներկայացված աղյուսակը բնութագրում է «\_\_\_\_\_ արևային կայան» ՀՈԱԿ-ի գումարային ներհոսքերի կանխատեսում.

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

Տարի	Գումարի ներկից (<< դրամ)	Զուտ գումարի արտահոսք	Զուտ ներկից
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			
11			
12			
13			
14			
15			
16			
17			
18			
19			
20			

## 7.5. Գործունեության հիմնական ցուցանիշները հնարավոր փոփոխությունը հաշվարկային ժամանակաշրջանում:

Ֆինանսական բոլոր հաշվարկներում նախատեսված է, որ կայանի արտադրած էլեկտրաէներգիան տարեկան միջինը պետք է նվազի մոտ \_\_\_%-ով: Շահագործման մեկնարկից \_\_\_\_\_ տարի անց նախատեսվում է բոլոր ինվերտորների փոխարինում նորերով:

Հաշվարկները կատարված են ցանցի \_\_\_%-ով հասանելիության հաշվարկով, քանի որ ցանցի հետ կապված վթարների և որոշ շահագործման/սպասարկման գործընթացների դեպքում անհրաժեշտ է լինելու արևային կայանի աշխատանքը կասեցնել:

### ՀՈԱԿ-ի տնօրեն

Սույն փաստաթղթին կցվում է արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգման գործարար ծրագրի մշակման հիմքում դրված հիմնավորող փաստաթղթերը:

Հավելված 1. ներկայացված է \_\_\_\_\_ ընկերության \_\_\_\_\_ Վտ դրվածքային / կամ YYY ՎտԺ ելքային հզորություն արտադրության արևային վահանակների տեխնիկական նկարագրի մանրամասները:

Հավելված 2. ներկայացված է \_\_\_\_\_ ընկերության \_\_\_\_\_ սերիաների արևային փոխակերպիչների տեխնիկական նկարագրի մանրամասները:

Հավելված 3. Նկարագրված է արևային վահանակերի կրող կոնստրուկցիաների տեխնիկական նկարագրի մանրամասները:

Հավելված 4. Ցանցի միացման սխեմա:

Հավելված 5. Արևային վահանակների տեղաբաշխումը:

## Հավելված 2

Կազմված է՝  
Բաղկացած է՝ 9 (ինը) թերթից  
Տպագրված է ընդամենը՝ 0 (----) օրինակ  
Օրինակ 0

<b>ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝</b>	<b>ԳՐԱՆՑՎԱԾ Է՝</b>
<p>Հայաստանի Հանրապետության _____ մարզի _____ համայնքի ավագանու՝ 00.00.2023թ. 00-Ա որոշմամբ _____ համայնքի ղեկավար՝ _____</p>	<p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ _____ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ _____ ՀՎՀՀ՝ _____</p>



# «..... ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքի «-----» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը - այսուհետ՝ «Կազմակերպություն» համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն: Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքն է (այսուհետ՝ «**Հիմնադիր**»), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքապետարանը՝ ի դեմս համայնքի ղեկավարի:

Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքի ավագանու՝ 00.00.2023 թվականի թիվ 00-Ա որոշման համաձայն: Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.2 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը և իր անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.3 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով այսուհետ՝ «Օրենսգիրք», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով այսուհետ՝ «Օրենք», Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.4 Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով և ակտիվներով: Կազմակերպությունն պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար:

1.5 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Կազմակերպությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.6 Կազմակերպության անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «—————» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն կրճատ՝ «—————» ՀՈԱԿ ռուսերեն լրիվ՝ “—————” Общинная некоммерческая организация, կրճատ՝ “—————” ОНО անգլերեն լրիվ՝ “—————” community non-commercial organization կրճատ՝ “—————” CNCO

1.7 Կազմակերպության գտնվելու վայրը, փոստային հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն ————— մարզ, ք. —————, —————, փոստ —————

## **2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ**

2.1 Կազմակերպությունը լիցենզիայի հիման վրա իրականացնում է արևային էներգիայի արտադրություն և վաճառք, որը համարվում է Կազմակերպության հիմնական գործունեության տեսակը:

2.2 Ստացված շահույթը Հայաստանի Հանրապետության ————— մարզի ————— համայնքապետարանի և Կազմակերպության միջև կնքված Պայմանագրով սահմանված կարգով օգտագործվելու է Հայաստանի Հանրապետության ————— մարզի ————— համայնքում՝ Կայուն զարգացման նպատակների՝ մասնավորապես էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանն ուղղված ծրագրերի իրականացման նպատակով:

## **3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1 Պետական գրանցման պահից Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով և ակտիվներով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության բանկերում՝ հաշվարկային

բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):

Կազմակերպությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք;

- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով;

- օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.3 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

3.4 Կազմակերպությունը պարտավոր է.

օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում ու ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,

- աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ,

- յուրաքանչյուր տարի իրականացնել իր գործունեության անկախ ֆինանսական ու էներգետիկ աուդիտ, և արդյունքները ներկայացնել Ալավերդի համայնքի ավագանու առաջիկա նիստին.

- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցված վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար, օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները, հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվությունը,

- ապահովել Կազմակերպության փաստաթղթերի (Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Կազմակերպության ներքին փաստաթղթերի, ստորաբաժանումների ու հիմնարկների առանձնացված կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:

- Կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

## **Ընկերության Ֆոնդերը**

3.5 Ընկերությունն ստեղծում է պահուստային հիմնադրամ զուտ շահույթի 5 (հինգ) տոկոսի չափով:

3.6 Պահուստային հիմնադրամը նախատեսված է Կազմակերպության կորուստները ծածկելու, արևային կայանի խափանված սարքավորումները վերանորոգելու կամ փոխարինելու և այլ միջոցներ ձեռք բերելու համար: Ընկերության Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

## **4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ**

4.1 Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

4.2 Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի՝

- հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը (այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները);
- կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները ու ցուցումները;
- վերահսկողություն իրականացնել Կազմակերպությանն համայնքային ամրացված

սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ;

- հայցով դիմել դատարան՝ Օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով, օգտվել օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3 Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է՝

- ապահովել Կազմակերպության բնականոն գործունեությունը;
- չիրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ;
- կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները;
- պահպանել սույն կանոնադրության դրույթները:

## **5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ**

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է սեփականատեր՝

- Կազմակերպության հիմնադրի կողմից (հիմնադրման ժամանակ և հետագայում) սեփականության իրավունքով հանձնված գույքի,
- Կազմակերպության գործունեության հետևանքով արտադրված արտադրանքի և ձեռքբերված գույքի:

5.2 Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց: Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը կազմակերպության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն դրամով:

Կազմակերպության հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

5.3 Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով: Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը Կազմակերպությունն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

5.4 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը և շահույթի օգտագործման վերաբերյալ Հիմնադրին ներկայացվող տարեկան հաշվետվության ձևը սահմանում է Հիմնադիրը:

## **6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

6.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության հիմնադիրը, տնօրենների խորհուրդը և գլխավոր տնօրենը:

6.2 Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման մարմին է հանդիսանում Վերստուգող հանձնաժողովը:

6.3 Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը Կազմակերպության հիմնադիրն է, որն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը և որն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող

ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

6.4 Կազմակերպության հիմնադիրը ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար:

6.5 Կազմակերպության հիմնադրի իրավասությանն են պատկանում՝

6.5.1 Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Կազմակերպության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ;

6.5.2 Կազմակերպությանն սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը;

6.5.3 Կազմակերպությանն ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը;

6.5.4 Կազմակերպության վերակազմակերպումը;

6.5.5 Կազմակերպության լուծարումը;

6.5.6 Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը;

6.5.7 Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը, Կազմակերպության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը;

6.5.8 Կազմակերպության գործունեության վերահսկողության իրականացումը;

6.5.9 Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների և ծրագրերի սահմանումը;

6.5.10 Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը;

6.5.11 Կազմակերպության տարեկան ծախսերի, նախահաշվի հաստատումը;

6.5.12 Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկրի հաստատումը;

6.5.13 Կազմակերպության շահույթի օգտագործման կարգի և շահույթի օգտագործման վերաբերյալ Հիմնադրին ներկայացվող տարեկան հաշվետվության ձևի հաստատումը.

6.5.14 Կազմակերպության շահույթի օգտագործման մասին որոշման ընդունումը.

6.5.15 Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը, գործարքին փոխկապակցված այլ գործարքների հետ միասին գերազանցում է այդ գործարքների կատարելու մասին որոշման ընդունման

օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության 1/2-ը) կատարելուն համաձայնությունը տալը;

6.5.16 Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Կազմակերպության ներքին փաստաթղթեր) հաստատումը;

6.5.17 Ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների

որոշումը: Կազմակերպության Հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

6.5.18 Կազմակերպության ընթացիկ, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որին երեք տարի ժամկետով նշանակում և ազատում է Հիմնադիրը: Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության և Կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները Հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը (այդ թվում՝ Օրենքով նախատեսված բոլոր հիմքերը), այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ: Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Կազմակերպության Հիմնադրի իրավասությանը վերաբերվող հարցերից: Տնօրենը օրենքով, Հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6.5.19 Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանը, Հիմնադրին, պետությանը պատճառված վնասի համար, ընդ որում՝ տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

6.5.20 Տնօրենի բացակայության դեպքում Հիմնադրի գրավոր որոշման համաձայն՝ տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

6.6 Կազմակերպության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Կազմակերպության:

Կազմակերպության տնօրենը իր իրավասության սահմաններում՝

6.6.1 առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, պետական մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում;

6.6.2 տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները;

6.6.3 կազմակերպում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը;

6.6.4 տալիս է լիազորագրեր;

6.6.5 բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,

6.6.6 սահմանում է Կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

6.6.7 հաստատում է հաստիքներ;

6.6.8 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը;

6.6.9 կատարում է աշխատանքի բաշխում;

6.6.10 սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատակիցներին;

6.6.11 աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ;

6.6.12 իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

6.7 Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

## **7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Կազմակերպությունը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:



## 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը, նրա Հիմնադրի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Եթե լուծարվող Կազմակերպության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

8.2 Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության \_\_\_\_\_ մարզի \_\_\_\_\_ համայնքի բյուջե:

8.3 Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: